



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

Վարագայ Մուրբ Խառն 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(65.22-25)

Կիրակնօրեայ Ընթերցումներ Էջ 1

Ծանուցումներ Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԷՆ

(3.18-26)

Ի մաստուլթիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կռթնին՝ որպէս Տիրոջ: Իր իմաստութեամբ էր որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները: Իր հանձարով է որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն:

Որդեակ, իմաստութենէն մի՛ բաժնուիր բնաւ. խրատներու եւ խորհուրդներու

հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս, շնորհքներով զարդարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգստանան: Որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս, առանց երբեք գայթելու.

ցերեկը անվախ նստիս եւ գիշերը քաղցր նինջով քնանաս: Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

... խրատներու եւ խորհուրդներու հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս...

Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Կեանքի ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը: Այլեւս զուր տեղ պիտի չ'աշխատին ու դժբախտ զաւակներ պիտի չձնին, որովհետեւ Աստուծմէ օրհնուած սերունդ մը պիտի ըլլան, թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց զաւակները: Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ զիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. "Ի՞նչ կ'ուզէք": Այն ատեն գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եգան պէս յարդ պիտի ուտէ եւ օձը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չդպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լեռանս վրայ», կ'ըսէ Տէրը:

... իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

ՆԱՄԱԿԷՆ

(6.14-18)

Գալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարեւորը մարդուս

Թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբույժ թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վէրքերուն սպիւնները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

միւսը: Թղենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (24.30-36)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի ղրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ

ՊՅԵԼԵՅԷ՛Ր ԵԿԵՂԵՑՈՅՍ ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՐ

ԵՒ ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆՆ ԵՎ ՍԵՆՏԵՐ (like).

www.facebook.com/SourpHagopChurchMontreal

ՊՅԵԼԵՅԷ՛Ր

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՐԱՍ ՄԱՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱՅԷՁՐ՝ www.sourphagop.net

ՊՅԵԼԵՅԷ՛Ր

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՐԱՍ ՄԱՐ ԵԿԵՂԵՑՈՅ YouTube ԿԱՅԱՆ՝ ՓԱՏՆԵԼՈՎ Sourp Hagop Armenian Church

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՆՈՐՕՐԸ ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ ԵԿԵՂԵՑՈՅ ԳՐԱՏԵՆԵԱՎ՝ 514 331 5445 x202 ԹԻՒՆ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻՎՆ ԸՐԲԱԹԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԵԱՐ Ե-ՆԱՄԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԵՅԷՔ eglise@sourphagop.net Ե-ՀԱՍՅԷՐՆ: